ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Վաչէ Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոն
tatev1111@mail.ru

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ՄԱՏՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԷՋԵՐԸ («ԴԱԺԱՆ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ)

Բանալի բառեր և արտահայտություններ. Արցախ, դրախտավայր, երկրաշարժ, արյան շիթ, ծխացող բուրվառ, խորհրդավոր երազ, լուսո մանուկ, անհուն կարոտ :

Ключевые слова и выражения: Арцах, райский край, землетрясение, струя крови, дымящийся бульвар, таинственный сон, светлый ребенок, безграничная тоска.

Key words and expressions: Artsakh, paradise, earthquake, blood flow, smokey sturgeon, mysterious dream, youngling of light, an indefinite longing.

Հր. Հովհաննիսյանի չափածո մատյանի վերջին էջերն ամփոփվեցին 1993 թվականի լույս տեսած ժողովածուում, որը դուրս մնաց քննադատության ուշադրությունից: Թերևս բացառություն է Լևոն Հախվերդյանի՝ <<Գրական թերթ>>-ում տպագրված <<Բանաստեղծն ու իր ընթացքը>> հոդվածը, որտեղ ժողովածուն արժևորվում է որպես <<վերջին տարիների աղետներն ու ավերները տեսած, ազատագրական կռվի զոհերի կսկիծը, ժողովրդի տառապանքը հոգու մեջ քամած բանաստեղծի խոսք>>[1]:

Ժողովածուն բացվում է <<Ժամամուտ>> բանաստեղծությամբ և փակվում <<Ոգեկոչում>>-ով : Տարածաժամանակային ընդգրկումների սահմանները որոշակիորեն ընդգծված են՝ 1988-1993 թվականների, Արցախ՝ Հայաստան աշխարհի համապատկերում: Որոշակիորեն ընդգծված են նաև թեմաները՝ երկրաշարժ, արցախյան հերոսամարտ, հայրենիքի տնտեսական ծանր վիճակ: Թեմասիկ այս երեք շերտերի համապատկերում էլ արտահայտվում են բանաստեղծի հոգու կսկիծը, տառապանքն ու ցավը, մտահոգությունները, որոնք, սակայն, չեն վերածվում ողբի:

[1] Հախվերդյան Լ., բանաստեղծն ու իր ընթացքը, <<Գրական թերթ>>, 1993, N 26:

Ժողովածուն բացող <<Ժամամուտը>> բանաստեղծի <<տքնության խոհի>>, <<տիրական բողոքի>>՝ առ աստված առաքված ճիչն է, որ ծնվում է ցավից մի ժողովրդի, որն ապրել է <<տենդի անպատմելի պահեր>>, <<բթության ձորին ամբարտակ է կերտել, մթության ծովին արեգակ է նետել>>: Բանաստեղծությունը կոչ է <<արարիչ խենթերին>>.

Վրեժ դարձեք զոհի
Եվ Աստծո դեմ բողոք...
Եվ Վերածնվե՞ք հիմա
Իբրև մանուկ լուսո՝
Այս աղետի դիմաց
Նոր հավատի հույսով:[2]

Իսկ <<Ոգեկոչում>>-ը բանաստեղծի հույսի ու հավատի արձագանքն է՝ ուղղված սերունդներին:

Անարդար է եղել Աստված մեր հանդեպ.
Ինչու՞ պիտի հենց մեր գլխին իջներ ամպ,
Ինչու՞ պիտի հենց մեր ուղին խոտորվեր,
Ինչու՞ պիտի դարն սկսվեր մեր արյամբ,
Մեր արյամբ էլ նրա վերջը բոսորվեր...[3]

Ահավիրքներով, կոտորածներով, տեղահանումներով լեցուն մեր ճանապարհը մենք մեն-մենակ ենք անցել: Խուլ են եղել մեր <<բարեկամների>> ականջները, աչքերը՝ կույր, իսկ լեզուները՝ ճարտար.

Ձեզնից ոչ ոք մեր վշտի մոտ չմնաց,
Մեզ թողեցիք էլի մենակ, անտերունչ
Մեր հույսի հետ՝ այս հին լեռան դեմ դիմաց,
Մեր հույսի հետ՝ Լուսավորչի կանթեղում,
Ի՞նչ հրավառ երգեր էիք բարբառում –
Եղբայրությու՞ն, ազատությու՞ն, դաշնությու՞ն...
Այդ երգերից թորում եք արտ, ամբարում
Խաշխաշի սերմ, փայտի օղի, օձի թույն...
Ծանոթ վիշտն է հոգիս կրծում դառնագին,
Դրախտի դուռ, դրախտավայր այս բնում.
Ի՞նչ հարևան, որ չոքել է մեր բկին,
Ի՞նչ բարեկամ, որ լռում է ու գնում:[4]

---

[2] Հովհաննիսյան Հր., Դաժան դրախտավայր, հեղինակային հրտ., Երևան, 1993, էջ 5:
[3] Նույն տեղում, էջ՝ 73:
[4] Նույն տեղում, էջ՝ 72-73:

Ժողովածուի բանաստեղծությունները գրվել են 1988-1993 թվականներին՝ մեր պատմության դաժան, օրհասական օրերին. Շատերը տեղի անտեղի ակնարկում էին <<մութ ու խավար , ցուրտ>> տարիները, շատերը հուսալքվել ու բռնել էին կամավոր գաղթի ճանապարհները՝ թողած հայրենի եղերքը, պապերի, ծնողների, որդիների շիրիմները:

Հուսալքության ոչ մի խոսք չկա <<Երկիր դրախտավայր>>- ում, խուսախաբության ոչ մի շեշտ: Դրախտավայր երկրի համապատկերը ներկայացնելով ժամանակի տարբեր հոլովույթներում՝ բանաստեղծը հանդես է գալիս ոչ թե որպես ողբասաց, այլ որպես հայրենիքի <<դժբախտ օրերի զանգահար>> ու գալիք <<պայծառ օրերի զանգակ>> և հավատում է, որ այդ զանգակը երբեք չի լռելու.

Քո սերը երբեք ես չեմ սքողել
Նենգ ու խորամանկ չարակամներից,
Պայծառ օրերիդ զանգակն եմ եղել
Եվ զանգահարը դժբախտ օրերիդ:[5]

Անհնարին թվացող վիճակները մեր դարավոր պատմության տարբեր հանգրվաններում արհավիրքներին դիմակայելու նոր հնարներ են ծնել. անհնարին թվացող վիճակում, երբ վտանգված էր մեր ինքնությունը, Մաշտոցը երկնեց մեր ամենազորեղ զենքը՝ այբուբենը, երբ երկատված մեր հայրենիքը գտնվում էր քառատման վտանգի առջև, հայտնվեց Գարեգին Նժդեհը: Այդպիսի օրհասական վիճակում հայտնվեցինք նաև XX դարի մայրամուտին, երբ մեր քոչվոր հարևանները կարծում էին, թե ավերիչ երկրաշարժը, տնտեսական ծանր վիճակը Սումգայիթի ու Բաքվի եղեռնագործությունները, շրջափակումը վերջնականապես ծնկի կբերեն հայ ժողովրդին, կջարդեն նրա ողնաշարը: Մտածեցին ու սանձազերծեցին արցախյան պատերազմը՝ մոռանալով, որ հայ ժողովրդն ունի իր թշնամիների համար մի զարմանալի, գենետիկորեն սերնդեսերունդ փոխանցված մի հատկություն՝ հայրենիքին սպառնացող վտանգի դեպքում համախմբվելու, արհավիրքին ազգովի դիմակայելու մի բռունցք դառնալու հատկություն:

Արցախը փոխեց ժողովրդի մտածելակերպը, նրա մեջ արթնացրեց հանգամանքների բերումով քուն մտած Դավթին, և մեր թշնամիների զարմանքը տասնապատկվեց, երբ տեսան, որ՝

Հայի ձեռքին արդեն սուր է երևացել,
Հայի աչքից արդեն զայրույթն է հորդում:[6]

---

[5] Նույն տեղում, էջ 61-62:
[6] Նույն տեղում, էջ 86:

Արցախը համախմբեց ողջ հայությանը, ու սկսվեց հայրենանվեր որդիների տունդարձը: Արցախյան հերոսամարտին մասնակցելու էին գալիս օտար ափերից, որտեղ՝

Չեն աղմկում, չեն վիճարկում, չեն խոսում,
Ոչ անցյալից, ոչ ներկայից, ոչ մեկից,
Բոլոր տենչերն այստեղ մերկ են ու մեկին,
Եվ կյանքն ուրախ երազի պես է հոսում:[7]

Վերադառնում են արյան կանչով.

Քո Նժդեհ որդին դառնում է իր տուն,
Վերադառնում է քո թափառ հոգին,
Որ քեզ հետ տանի վիշտ ու խնդություն,
Սատար լինի քեզ, ցավդ ամոքի:

Քո Նժդեհ որդին քո գիրկն է դառնում,
Կարոտով փարվում քո պարթև լանջին,
Հայաստան, ձայնիր ցնծությամբ անհուն
Տուն վերադարձող կռունկիդ կանչիր:

Անգութ անհայտով քեզանից բաժան,
Արդ, գալիս է նա՝ քո մերժված որդին,
Կյանքում շահելու կռիվդ դաժան,
Կանգուն պահելու սրբատունդ հին:[8]

Անսահման է բանաստեղծի լավատեսությունը, հույսը՝ մեծ, հավատը՝ անսասան: Միայն մի բան է խնդրում բարձյալից.

Տեր իմ , մի քիչ էլ կյանք տուր աշխարհիկ,
Որ փորձությունդ մինչև վերջ կրեմ,
Ապրեմ անդորրը հայոց աշխարհի
Եվ անդորր հոգով հավիտյան լռեմ
Անշուք, աննկատ կյանքի մի կտոր,
Որ տեսնեմ իմ որբ Արցախն ազատված,
Սևերը հանած, թևերն՝ անկոտոր,
Եվ ոսոխները՝ առհավետ պարտված:[9]

<<Մութ ու ցուրտ>> օրերը կանցնեն, ժամանակը կանթեղի ու կսպիացնի բոլոր վերքերը, Մոնթեների, Մեղրյանների նոր սերունդներ կծնվեն, որոնք ոչ

[7] Նույն տեղում, էջ 29:
[8] Նույն տեղում, էջ 63-64:
[9] Նույն տեղում, էջ 80:

թե զենք, այլ գիրչ կվերցնեն ու կերգեն քաջորդիներին, <<կացնահար ծառերի>> տեղ նոր ծառեր կտնկեն, <<Կմեղմանան ցավերը, կսպիանան վերքերը//, Կկանաչեն կացնահար ծառերը մի օր//, Կմոռացվեն որբության ու ողբության երգերը//, Կողողոնջեն վանքերի զանգերը բոլոր//: Կշշնջան հովերը, ետ կդառնան հավքերը//, Ու կխայտան ջրերը լանջերից դարձի>>, և << ամեն տեսակ մահերից վեր կհառնեն կյանքերը>>...[10]:

<<Դաժան դրախտավայր>> ժողովածուն աչքի է ընկնում ոչ միայն բանաստեղծի ապագայի հանդեպ ունեցած լավատեսությամբ, այլև ուշագրավ պատկերներով, գույների հետաքրքիր համադրություններով ու հակադրություններով, ինչը խիստ բնորոշ է Հր. Հովհաննիսյանի բանաստեղծական մոդելին:

Զարմանալին, ավելի ճիշտ՝ ցավալին միայն այն է, որ բանաստեղծությունների այդ գեղեցիկ փունջը լույս է տեսել խիստ սահմանափակ քանակով, էժանագին թղթի վրա,հեղինակի միջոցներով: Եվ սա այն դեպքում , երբ <<ցուրտ ու մութ>> հորջորջվող տարիներին մեծ տպաքանակներով ու բարձրորակ հրատարակությամբ լույս էին տեսնում գրականության հետ ոչ մի կապ չունեցող ժողովածուներ:

Տ. Պողոսյան

Հրաչյա Հովհաննիսյանի չափածո մատյանի վերջին էջերը
(<<Դաժան դրախտավայր>> ժողովածուն)

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է Հրաչյա Հովհաննիսյանի <<Դաժան դրախտավայր>> ժողովածուն, որտեղ զետեղված բանաստեղծություններում արտահայտված են բանաստեղծի տագնապներն ու մտահոգությունները՝ պայմանավորված XX դարավերջի դաժան իրադարձություններով՝ երկրաշարժ, արցախյան ազատամարտ: Մասնավորապես նշվում է, որ հայրենիքին պատուհասած արհավիրքը, ազատամարտի անդառնալի կորուստները չեն հուսալքում բանաստեղծին. նա հավատում է իր դրախտավայր հայրենիքի ապագային, արցախյան ազատամարտի հաղթական ավարտին:

[10] Նույն տեղում, էջ՝ 86-87:

Т. Погосян

Последние страницы поэтической книги Грачья Оганисяна
Сборник ("Жестокий райский край")

Резюме

В статье представляется сборник Грачья Оганисяна под названием "Жестокий райский край", где в размещенных стихотворениях представляются тревога и беспокойство поэта, обусловленные жестокими событиями конца 20 века: землетрясение, Арцахская освободительная война. В частности, отмечается, что ужас который напал на родину, безвозвратные потери в Арцахской освободительской войне не обезнадежили поэта. Он верит в будущее своей родины как райскому краю, верит победоносному концу в Арцахской освободительской войне.

T. Poghosyan

Last Pages of Hrachya Hovhannisyan's Chronicles
(The "Bitter Paradise" Collection)

Summary

This article is about Hrachya Hovhannisyan's "Bitter Paradise" collection which reflects the whirls and solicitudes of the poet conditioned to the brutal events by the end of the 20th Century – earthquake, Artsakh liberation war. It particularly mentions that neither the catastrophe of the homeland nor the irreversible losses of liberation war discourages the poet. He believes in the future of his paradisal homeland, in the victorious end of the Artsakh liberation war.

Խմբագրություն է ուղարկվել 18.07.19
Հանձնարարվել է գրախոսության 25.07.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19